ՅՈՐԵԼԵԱՆԱԿԱՆ ՏՈՆԵՐԸ ԳԱՒԱՌՈՒՄ

I

Սուրբաթ, 14 հոկտ.

Հոկտ. 12-ին, ս. Թարգմանչաց տօնի օրը, տաճարի գիւտի 1500-ամեակի և տպագրութեան 400-ամեակի առիթով տեղիս Ծխ. դպրոցում կայացաւ հանդէս, որին ներկայ էին դպրոցի հոգաբարձութիւնը, ուսուցչ. խումբը, աշակերտութիւնը և հանդիսականներ։

Դահլիճը զարդարված էր թարմ կանաչներով։

Հանդէսը բացեց «Հայր մերով» գործակալ Յովս. ք. Առիւծեանը, ապա այս տարի հրաւիրված ուսուցիչ Մկը. Բալայեանը խօսեց օրվայ նշանակութեան մասին և հանդիսականների վրա թողեց լաւ տպաւորութիւն. նոյն ուսուցչի՝ դպրոցի տանէրից պատրաստած երգեցիկ խումբը երգեց աշող կիրակի։

Հ. Առիւծեանը, ի դիմաց հոգաբարձութեան, ուսուցչ. խմբի և հայ ազգասիրութեան, հեռագիր ուղարկեց Էջմիածին Վեհին, շնորհաւորելով համազգային մեծ տօնը։

Կիրակի, հոկտ. 13-ին, ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցում պատարագից հ. Առիւծեանը Պատարագից յետոյ կատարվեց հայրապետական մաղթանք, իսկ յետոյ հոգևոր հանգիստ հայ գրականութեան երախտաւոր հանգուցեալների հաշար։ Զայն

II

Հին-Նախիջևան, 14 հոկտ.

Երէկ, կիրակի, մեզանում ևս տեղի ունեցաւ հայ գրերի գիւտի 1500-ամեակի և տպագրութեան 400-ամեակի տօնակատարութիւնը ս. Երրորդութեան եկեղեցու գաւթում։

Պէտք է ասած, որ այդ օրը նոյն եկեղեցու ուխտն էր՝ Պանասեան բժշկի, որի նշխարները իրը գտնվել են նոյն եկեղեցու շինութեան ժամանակ։ Կար և սովորական մատաղ, ուստի կրկնակի տօնների առիթով ժողովված էր հոծ բազմութիւն։

Պատարագից յետոյ եկեղեցու գաւթում կատարվեց բացօթեայ հայրապետական մաղթանք, որից յետոյ վիճակի փոխանորդ Սիսն վարդապետը խօսեց տօնի առիթով, համեմատելով ս. Մեսրոպին Պոմպէիէոսի հետ, փառաբանելով տաճարի գիւտի 1500-ամեակը և Վեհ. Հայրապետին, որ այդ տօնի կատարման նախաձեռնողն հանդիսացաւ։ Փոխանորդից յետոյ խօսեցին տեղիս Ծխ. դպրոցի 2 ուսուցիչներ՝ Շմ. Յովսէփեան և Արշ. Տէր-Յովհաննեան հայ տաճարի գիւտի և տպագրութեան պատմութեան էջերից։

Փոխանորդը երէկ տօնի առիթով Հին-Նախիջևանի և վիճակի իր հօտի կողմից ուղարկեց Էջմիածին Վեհին մի հեռագիր հետևեալ բովանդակութեամբ.

«Ցաւախտեանական յիշատակ և փառք Հայկեան Պրոմէթէոս ս. Մեսրոպին՝ ամենատաջորդ խմաստութեան կրակով Հայաստան աշխարհը լուսաւորողին։ Փառք Ձեր Սրբութեան, լուսոյ և գիտութեան մեծ հովանաւորողդ, որ այսօր անմահացուցիր ես Մեսրոպեան փառաւոր գիւտի պանծալի յիշատակը»։ Պիրօ

Ց. Գ.—Հին-Նախիջևանի գաւառում դպրոցական ֆոնդի հանգանակութիւնը հասնում է 2500 բուբլու։ Նոյն